

ուստի համարակապէս կը հաստատեմ որ Ալլահվերտեանց գերդաստանը Կամարական նախարարաց ազգէն ունի իւր սկիզբն եւ ծառուրդը:

Բաճեան զգալով սակայն թէ իր այդ խօսքերը համոզիչ ոյժէ զուրկ են՝ կ'աւելցնէ. «Այս պատմութիւնս իմ գլխէս հեռաւ մտացածին գիւտ մը, չէ հասկա ինձի առաջնորդ ունիմ մէկ պատմիչ մ'որ Կամարական ազգին պատմութիւնն եւ ազգաբանութիւնը կարեւորութեամբ մը... մինչեւ վերջոսաներորդ դարը կը հասցնէ. անկից ետք ուրիշ անանուն մը կը շարունակէ նոյն պատմութիւնը մինչեւ եօթնետասաներորդ դարը»:

Բաճեանի ազբիւր եւ փաստ ծառայած անանուն հեղինակներու այդ «Կամարական ազգին պատմութիւնն ու ազգաբանութիւնը» երկրայեղի գրած էր արդէն 1881ին Ալիշանի, իսկ Կոզեան կը գրէ «... վերջերայ ընթերցում մը կը բուռէ համոզուելու համար, որ անանուն հեղինակը կը գիտէ ոչ թէ Կամարականաց պատմութիւն տողել, այլ Ալլահվերտեաններու Կամարական ծագումը փաստել պատմականօրէն: Այդ փաստին արժէքն առ այժմ առկա ձգելով՝ չեմ վարանիր հատուկտուր գրուածքը Կամարականներու Պատմութեան մը բոլոր յատկութիւններէն գուրկ հոշակելու: Հայ միւս պատմագիրներու հաղորդածները որեւէ նպաստ եւ լուսաւորութիւն չեն ստանար այս պատմութեան, որ յայտնապէս անուցմէ եղած փառածոյք մըն է պակասաւոր եւ սխալաշատ»:

Այսքան կասկածելի աղբիւրի մը կցկցած Կամարականներու պատմութիւնը մինչեւ ժէ. դար բերելէ վերջ՝ Բաճեան խօսքը Ալլահվերտեաններու ուղղելով՝ կ'աւելցնէ. «Ես ալ այն պատմութիւնը միշտ ինձի առաջնորդ բռնելով՝ պատմութեան շարունակութիւնը կը բերեմ ձեզի կը հասցնեմ, ոչ թէ մտացածին կերպով, այլ նշմարութեամբ»:

Մտացածին չէ՛, ստուգիւ, երբ Բաճեան ծերերու յիշողութեան եւ բերանացի աւան-

դութեանց վրայ յեցած Ալլահվերտեաններու ծագումը Շարդար — Թորթումի գաւառէն եղած կ'ուզէ ցուցնել¹⁰: Բայց մտացածին է, երբ ենթադրարար Կամարականներու հայրենիք ցուցնելով կամ ընդունելով վերոյիշեալ Շարդար-Թորթում գաւառը՝ առկէ կ'եզրակացնէ թէ ուրեմն՝ Ալլահվերտեանց շառաւիղներ եւ Կամարականներու¹¹:

Բաճեան ոչ մէկ ապացոյց գտած է թէ ինչպէս Կամարական կոչումը Ալլահվերտեանի (կամ Աստուածատուրեանի) փոխուած է. չէ կրցած ցուցնել թէ Կամարականներու քով տոհմային աւանդութիւն եղած անուններ՝ Ալլահվերտեաններու ալ յատուկ են. չկայ որեւէ փաստ թէ Ալլահվերտեանները իրենց ալ ընդունած ըլլան իրենց Կամարականներու պայագատ ըլլալը:

Եզրակացութիւն: Բաճեան Վարդապետի գրութիւնը (Բազմ. 1908) ոչ մէկ հիմ ունի ապացուցանելու թէ Կամարականները Ալլահվերտեաններու նախնիքն եղած են:

2. ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆՆԵՐՈՒ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԸ

Սերովրէ Վ. Բաճեան, հակառակ իր անյաջող ձեռնարկութեան — ապացուցանելու թէ Ալլահվերտեաններու նախնիքը Կամարականներն եղած են — օգտակար եղած է Ալլահվերտեաններու նախնական բնակավայրի մասին ծերերու աւանդութիւնը գրի առնելով: Երանի թէ աւելի այս կէտին ուշ դարձուցած ըլլար եւ տար այդ առթիւ աւելի մանրամասնութիւններ Ալլահվերտեաններու 1600—1850ի պատմութեան մասին, մինչդեռ այդ շրջանէն շատ մը կէտեր անձանօթ եւ մութ մնացած են. Բաճեան նոյն իսկ իր շերտանից ապրող Ալլահվերտեաններու մասին յիշատակութիւն չէ ըրած, անձեր ու զէպքեր՝ որոնք ուրիշ կողմէ ալ անձանօթ են:

«Ալլահվերտեան կաթողիկէ հայ գերդաստանին ծագման պատմական եւ նիշդ տեղեկութիւններու սկիզբը մինչեւ 1600 կը հասցնէ զմեզ, երբ նախահայրերէն մին Սահակ եւ յաջորդները Թորթում գաւառէն Կարնոյ Հինձք գիւղը, եւ ասկէ Կարին եւ յետոյ ասկէ Կ. Պոլիս անցած հաստատուած են¹²»:

¹⁰ Անդ, էջ 382:
¹¹ Անդ, էջ 293 եւ 382:
¹² Հ. Գրիգորի Մ. Վ. Գալէմբարեան, Կենսագրութիւններ Երկու Հայ Պատրիարքներու եւ տասնէկուսուներորդ, Վիեննա 1915, էջ 148:

⁶ Անդ:
⁷ Շիրակ, Վենետիկ 1881, էջ 6 ծանօթ.:
⁸ Գուգո. Հ. Սահակ Կոզեան, Կամարականները «Տեղաբերական եւ Արշարունեաց», պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա 1926, էջ 2:
⁹ Բազմ., անդ, էջ 293:

Թորթում՝ որ կը համապատասխանէ Հին Շարդար կամ Շարդար¹³ գաւառին՝ Կարնոյ կը վերաբերի եւ անկէ 12 ժամ հեռու է: Կը դանուի Պարայ եւ Սաչախայտի լեռներու մէջտեղ՝ երեք ձորերու միջեւ, ուսկից կը հոսին երեք գետակներ, «որոնց ափունքները կանանչազարդ, ծառաւետ, պարտէզներով ու պողալից ծառերով լի են: Կարնոյ քաղաքին պարտէզը կը կոչուի այս գաւառը, որուն վերի կողմերը Թութ, կեռաս, խնձոր, տանձ, ծիրան, սերկեւիլ, դեղձ, հուն, զղեար եւ այլ ասոնց նման պտուղներ այնքան շատ կ'ըլլան որ Կարնոյ քաղաքին եւ իւր շրջակայից բնակիչները կը կշտացնեն կոր, եւ վարի կողմերը՝ խաղող, թուզ, ընկոյզ, ձիթապտուղ, դամոն, նուշ, շոր, բրինձ եւ բամպակ... առատապէս գարի, ցորեն, հաճար, կորեկ, եւ այլն... շատ աղէկ կ'ըլլան: Որովհետեւ տեղին կլիմայն բարեխառն է, ոչ շատ տաք եւ ոչ շատ պաղ¹⁴»:

Թորթումի մէջ Ալլահվերտեաններու բնակավայրն եղած է Երաշխուտ կամ Խաշուտ աւանը¹⁵, որ ԺԹ. դարու սկիզբը աւերակ գիւղաբնակարանի մը վիճակն ունէր. կը զբոսնէր լեռան մը ստորոտը եւ ունէր վայելուչ դերք. իրմէ քիչ հեռու կը գտնուէր Վարայ-Վարայ բերդը (Փարպեցի, էջ 320). շրջակայքին մէջ տակաւին կը տեսնուէին հին շինուածքներու նշմարանքներ, փլված եկեղեցիներու պատեր ու գերեզմաններ. իր վարի կողմէն գետակ մը կ'անցնէր, որուն արծաթափայլ ալիքները որիգաւէտ ափերու հովիտները կ'ոռոգէին. կային նաեւ պարտէզներու աւերակներ ու աւերուած ջրանցքներ. հակառակ իր այս աւերակային վիճակին՝ Սաչախայտի ընդհանուր տեսարանը հաճելի երեւոյթ մը կը պարզէր¹⁶:

Բնիկ Կարնեցի ալեւոր մը ինձ կը հաւատէր որ Թորթումի գիւղերու մեծ մասը պտուղի, անասունի կամ տունկի ու բոյսի անուրով կազմուած են: Այսպէս՝ Ընկուզեկ-Գիւղ, Տանձուտ-Գիւղ, Հունուտ-Գիւղ, եւ այլն: Խաշուտն ալ կազմուած է խաշ եւ ուտ մասնիկէ: Ուտ (ոտ) յայտնի է որ բանի մը՝ տեղ մը շատ գտնուիլը կը ցուցնէ (փարուտ արտ). իսկ խաշը բոյս մըն է, ինչպէս ժախը,

¹³ Ղազար Փարպեցի, Պատմութիւն, Թիֆլիս էջ 320: — Սորեն. Աշխարհ, Վենետ., էջ 607:
¹⁴ Բազմ., անդ, էջ 404:
¹⁵ Անդ, էջ 292, 382:
¹⁶ Բազմ., անդ, էջ 405:

եւ մեղրուտ ծաղիկներ կու տայ: Այս պատճառաւ կ'ըսեն Կարնեցիք. «Ուր խաշն է շատ՝ հոն մեղրն է առատ»: Ուստի Սաչախայտ կը նշանակէ վայր մը, ուր խաշն առատ կը բուսնի:

Սաչախայտի բնակիչները հաւանօրէն ամբողջութեամբ Հայեր եղած են Հին ժամանակ: Սակայն կանուխէն արտագաղթի տեղի ունեցած եւ մասամբ բունի թրքացած¹⁷ ըլլալով՝ բնակչութիւնը նոսրացած էր:

Սաչախայտի Հայերէն փոքրիկ խումբ մը — իրր 5—6 ընտանիք — 1830ին Ռուսաստան գաղթելով՝ Ախլցխայտ արեւելեան — հարաւային կողմը, մէկուկէս ժամ հեռու, Շապանուպէլ լեռներու ստորալանջին եւ փոքրիկ ձորակի մը կողմին շինած է իր քարաշէն — հողածածուկ տնակները եւ կազմած գիւղակի մը, որ պաշտօնապէս Ապաթխե կը կոչուի, բայց գիւղացիները իրենց գիւղը Խաշուտ, իրենք զիրենք՝ Խաշուտցի կը կոչեն: 1910ին այս Սաչախայտ գիւղը ունէր 25 տուն եւ 250 բնակիչ՝ գուտ հայ կաթողիկէ, քարաշէն եկեղեցիով եւ դպրոցով եւ մէկ վարդապետով:

Մեզ անձանօթ կը մնայ — 1910ին իրր տղայ ելած ենք Հայրենի գիւղէն — թէ Սաչախայտի ներկայ բնակիչները ինչ աւանդութիւն պահած են իրենց նախնի բնակավայրէն ու բնակիչներէն:

3. ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆՆԵՐՈՒ ՆԱԽԱՀԱՅՐԸ ԵՒ ԽԱՇՈՒՏԵՆ ԷՆԻՉՔ ՓՈՆԱԿՐՈՒԹԻՒՆԸ

Պատմական նիշդ տեղեկութիւններու համեմատ, ինչպէս տեսանք, Ալլահվերտեաններու ծագումը մինչեւ 1600 թուականը կը բարձրանայ¹⁸:

Իրրեւ նախահայր ճանչցուած է Սաչախայտ-Երաշխուտցի Սահակ անունով անձ մը, որուն տոհմը «Փրանկ», այսինքն՝ կաթողիկէ էր¹⁹: Անձանօթ են Սահակի ծնողը եւ ծննդեան թուականը:

Թրքական հարստահարութենէ ներդուած՝ Սահակ, կամ գուցէ իր ծնողը՝ գլուխ անցած ընտանիքին՝ ժէ. դարու կէսերուն (1652էն վերջ. Բազմ., էջ 244), թողլով Թորթումի Սաչախայտ գիւղը՝ կը փոխադրուին

¹⁷ Անդ, էջ 383:
¹⁸ Հ. Գրիգորի Գալէմբարեան, անդ:
¹⁹ Մէմ. Ախպար, 1906, Թ. 4361: — Բազմ., անդ, էջ 382:

Կարնոյ Հինգճ գիւղը²⁰, ուր արտեր ու ա-
զարակներ գնելով երկրագործութեամբ կը
պարապին: Սահակ մերթ պայտարութեամբ
ալ զբաղելուն՝ տեղացիներէն կը կոչուի
«Նալի Սահակ Բեհեայ»²¹:

Բաճեանի պատմածին համեմատ՝ «Նալ-
ճի» Սահակ իր մէկ ազգիկը Կարնոյ Արծաթի
գիւղին մէջ կը հարսնացնէ եւ այդ առթիւ
ամբողջ գիւղը կաթողիկէ կը դառնայ²²:

Սխալ է սակայն Բաճեանի կարծիքը թէ
Ալլահիէրտեաններու Նախահայր «Նալճի»
Սահակն է, որ Արծաթի գիւղին Աստուածա-
ծին եկեղեցւոյն դաշտ մը նուիրած է: Բա-
ճեան կը գրէ. «Սուրբ Աստուածածնի եկե-
ղեցւոյն յիշատակ թողեր է մէկ չայիր մը
Նալի Սահակն, որ ամէն տարի պատարագ
ըսուի իւր ննջեցելոց հոգւոյն. նոյն չայիրն
դեռ եւս կայ եւ յիշատակարանն ալ եկեղեց-
ւոյ մէջ աւագանին մօտ քարի մը վրայ
գրուած է»²³:

Այս մասին Բօսեան ստուգում մը կա-
տարած եւ իրականութիւնը մէջտեղ հա-
նած է: Հ. Յակոբ Բօսեան՝ խօսելով Ար-
ծաթի գիւղի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ
վրայ՝ կը գրէ. «Եկեղեցին ունի նշանակու-
թեան արժանի միակ յիշատակարան մը, որ
1750 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ արձանագրութիւն
մէ: Քարահիւս սինեբուն առաջին կարգի
դասին կից գտնուած աջակողմեան սեան՝
դէպի խորան նայող երեսին վրայ հաստա-
տուած է մարմարին սպիտակ քար մը, փո-
րագրուած յիշատակարանով: Սոյն քարը
կ'երեւայ թէ գաղթականութեան ժամանակ
գտնով կիրով գոցած՝ ծածկած էին գաղթա-
կան գիւղացիք, այնպէս որ ասկէ քանի տարի
յառաջ, գիւղացի նոր սերունդը բնաւ տեղե-
կութիւն չունէր այն քարին եւ յիշատակա-
գրութեան նկատմամբ, եւ արձանագրութեան
մէջ յիշուած չայիրին տարեկան արգիւնքը
կը գանձէր Կարնոյ կաթողիկէ մայր եկեղե-
ցին: Վերջին տարիներս, շուրջ 1894 թուա-
կանին, Ախալցխայի գիւղերը գաղթող գիւ-
ղիս ձեռագրոյնները կը յիշեն այն յիշատա-
կարանը եւ կը մեկնեն քարիս գտնուած
տեղը: Այս յայտարարութեան վրայ՝ ար-
դարեւ սեան վրայ ձեփուած գանը Բեհեայով,

²⁰ Ալիւան, Շիրակ, էջ 6:
²¹ Բագմ., անդ, էջ 383:
²² Անդ, էջ 399:
²³ Անդ:

Երեւան կը հանեն այն արձանագրեալ քարը,
որուն հետեւութեամբ գիւղիս եկեղեցին տէր
կ'ելլէ յիշատակարանիս մէջ յիշուած դաշ-
տին եւ տարեկան հասոյքին: Քարիս վրայ
փորագրուած յիշատակարանն է հետեւեալը.

Ես իսառաքելի Մկրտիչեցի Սահակս եկի
Արծաթի. Ղրժղթեցի Պօղոսին բաժին չայիր
Նալի* յիշատակեցի ի դուռն սուրբ Աստուա-
ծածնայ. որ տարին Խ. պատարագ անեն
ամէն բշաքքի (Երկուշաքքի) օվ որ չայիրն
ուտէ ինչ քանակայ որ հանդիպի այս պատա-
րագն կիսատ քողո պատիժն Կայէնի առ-
նու ՌճՂԹ»²⁴:

Ըստ Բաճեանի պատմածին՝ Ալլահիէր-
տեանց Նախահայր Սահակ Ենթարկուած է
1715ի Հայ Կաթողիկէներու դէմ հանուած
հարածանքին: Հինգրի մէջ բռնուող երկու-
քին մէկը Սահակն է, «բայց գեղին պէկն ա-
նոր ձեռութեան վրայ գթալով, երկուքն ալ
ազատեց»: Նոյնպէս 1721ին Կարնոյ իսառա-
քելի վարդապետին հանած հարածանքին են-
թարկուած է Սահակ²⁵:

Բաճեան Սահակի մահուան թուականը
չի յիշեր: 1721ի հարածանքէն վերջ զայն չյի-
շատակելով՝ անշուշտ մեռած կը համարէ:
Այդ պարագային՝ մահուան թուականը կ'ըլ-
լայ 1721—1722: Հ. Բարսեղ Սարգսեան,
Իրրեւ մօտաւոր թուական Սահակի մահուան՝
1694 կը գնէ²⁶, ինչ որ սակայն չէ կարելի
հաշտեցնել Բաճեանի տուած միւս թուական-
ներուն հետ:

Թէեւ Բաճեան կ'ըսէ որ Ալլահիէրտեանք
Հինգրի մէջ իրենց յատուկ շիրմատեղին կամ
«գերեզմանաց կարգը» ունեցած են, սակայն
Հ. Յակոբ Բօսեան Հինգրի մէջ, ինչպէս
նաեւ Կարին չէ գտած Ալլահիէրտեանց շիրմ
եւ որեւէ տապանագիր: Գոնէ իր «Քարձր
Հայք»-ի մէջ չէ յիշած:

4. «ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ» ՅՈՐԶՈՐԶՈՒՄԸ ԵՒ ՀԻՆԶՐԵՆ
ԿԱՐԻՆ ՏԵՂԱՓՈՒՅՈՒՄԸ

Աստուածատուր Ալլահիէրտեան:

Բաճեանի տեղեկատու 90 տարեկան ծե-
րունին Ալլահիէրտեաններու նախահայր Սա-

* Նալի բնուած չայիրն այժմ Նալի չայիր կ'ըսեն.
կը գտնուի գիւղիս մօտ առաջակողմը, որ տարեկան
15 ոսկւոյ հասոյք մը կը բերէ: Հ. Յ. Բօսեան:
²⁴ Հ. Յակոբ Մ. Վ. Բօսեան, Քարձր Հայք, Բ.
Կարնոյ գիւղերը, Վիեննա 1926, էջ 79—80:
²⁵ Բագմ., անդ, էջ 400:
²⁶ Անդ, էջ 244:

հակէն միակ արու դաւակ մը կը յիշէ՝ Աս-
տուածատուր անուամբ. «Գեղուանի, Գարտար
եւ Բայ մարդ մ'էր, որ տաճկի պէկեր իրմէ
կը քաշվէին. Աստուած ալ տուաւ, շատ յա-
ռաջ եկաւ. ասոնց հացը՝ մէյտանն էր, ա-
սոնց դուռներ աղքատաց ու միւսաֆիրի հա-
մար միշտ բաց էր: Ետք Հայեր ասոր թշնա-
մի եղեր էին, Փրանկ է ըսելով, բանա դնե-
լով ճէրիմէ (տուգանք) տալ տուին: Անկէ
ետք տունով քաղաք գնաց, ինքն ալ յերու-
սաղէմ ուխտ գնաց, մահտեսի եղաւ, ես ալ
զինքը ճերմակ մօրուք տեսայ»²⁷:

Աստուածատուրի ծնունդը եղած կը հա-
մարուի 1670ին²⁸: Սակայն նկատի առնելով
որ միեւնոյն աղբիւրները անոր զաւակներու
ծննդեան թուականներ կը նշանակեն 1756 եւ
1764, կը կարծենք թէ սխալմունք մը տեղի
ունեցած պիտի ըլլայ կա'մ 1670ի եւ կա'մ 1756
եւ 1764ի մասին: Եթէ ընդունինք թէ Աս-
տուածատուր 1670ին ծնած է՝ 1756ին 86 եւ
1764ին 94 տարեկան եղած ըլլալով՝ տղայ
չէր կրնար ունենալ:

Բաճեան Վ. ո'չ ծննդեան եւ ոչ ալ մա-
հուան թուական նշանակած է Աստուածա-
տուրի համար: Ան չի ճշդեր նաեւ Աստուա-
ծատուրի երկու զաւակներու ծննդեան թուա-
կանները:

Այս խնդրին լուծումը գտնելու համար
հարկ է ընդունել թէ կա'մ Աստուածատուրի
ծննդեան թուականը 1670էն աւելի վերջն
եղած է եւ կա'մ իր անմիջական սերունդը ոչ
թէ Մանուկ եւ Մատթէոս եղած են, այլ ու-
րիշ տղաքներ, որոնց անունը անձանօք մնա-
ցած է եւ այդ անձանօքներու զաւակներն են
Մանուկ եւ Մատթէոս:

Բաճեան — անշուշտ ուրիշ բերանացի
աւանդութիւններէ անտելով — կը գրէ որ
Կարնոյ Առաջնորդ Սաչատուր Վարդապետի
1721ին հանած հարածանքին առթիւ շատ մը
բանտարկեալներու մէջ էր նաեւ Սահակի
որդի Աստուածատուր, որ միւս բանտար-
կեալներուն հետ 35.000 զուրուշ տուգանք
վճարելով՝ կ'ազատի ու կ'ելլէ բանտէն.
«Կ'երեւայ թէ ուխտեր է, կ'երթայ յերուսա-
ղէմ՝ Քրիստոսի անօրէնութեան տեղերուն
յայցելութիւն ընելու եւ իր ուխտը կատարե-
լու. ապա ողջամբ իր հայրենիքը գառնալէն

²⁷ Բագմ., էջ 383:
²⁸ ՄԷՆՄ. Ալլապար, 1906, Թ. 4361: — Հ. Գրիգ.
Գալէմբեարեան, անդ, էջ 148:

ետքը՝ իւր ձեռունի հայրը մեռած ըլլալով եւ
ինքն ալ առեւտրական գործոց պարապելուն
համար, ա'լ Հինգր գիւղ չմնար, իւր բնա-
կութիւնն ի քաղաք կը հաստատէ, ուր որ
տուն եւ տեղ պատրաստ ունին եղեր յառա-
ջուց: Եւ անկէ ետքը ի Կարին քաղաք թէ՛
Հայոց եւ թէ՛ Կաթողիկաց երեւելի իշխանաց
մէկն էր Մանուկի Աստուածատուր եւ հռչա-
կեալ, ինչպէս որ մինչեւ ցայսօր իւր օրդ-
ւովք եւ թոռներով աւելի հռչակաւոր է եւ
իւր գերդաստանն իր անուամբ Ալլահիէր-
տեան կը կոչվի²⁹:

Գալէմբեարեանի համեմատ³⁰ Գերդաս-
տանի «Ալլահիէրտեան» յորջորջումը Կարնոյ
մէջ սկսած է՝ «Աստուածատուր» քարգմա-
նութեամբ քրքրելէն — ԱԼԼԱՀ ՎԵՐՏԻ³¹: Ինչ
որ կը հաստատէ Սերովբէ Ֆէրհաթեան³² ալ.
«Կը կարծուի թէ «Աստուածատուր»-էն յառաջ
եկած է Ալլահիէրտի անունը»:

Աստուածատուր ապրած է մինչեւ խոր
ձերութիւն եւ մեռած Հինգր գիւղը եւ հոն
ալ թաղուած: Բաճեանի արտայայտութենէն
այնպէս կը հասկցուի թէ ինքը տեսած է Աս-
տուածատուրի գերեզմանը Հինգրի մէջ³³:
Մահուան թուականը անձանօք է:

Աստուածատուր ամուսնացած էր Հինգրի
մէջ: Իր աներձագը գիւղին գլխաւոր անձն
ըլլալուն՝ մարդասպանութեան մ'առթիւ
թուրքերը անիրաւ տեղ գանդակ կը բռնեն եւ
կը ստիպեն որ հաւատքն ուրանայ: Յանձն
չառնելուն՝ Կարնոյ մէջ կը կախեն: Մանուկ
Ալլահիէրտեան շատ աշխատած, բայց չէր
յաջողած իր քեռին ազատելու³⁴:

5. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ԱԼԼԱՀՎԵՐ-
ՏԵԱՆՅ ՊՈՒԽ ՓՈՒՍԿՈՒԹԻՒՆԸ

Բաճեան կը գրէ. «Մանուկի Աստուա-
ծատուր Ամիրան երկու հատ մանչ եւ աղ-

²⁹ Բագմ., անդ, էջ 400:
³⁰ Անդ, էջ 148:
³¹ Ուրիշ աւանդութեան մը համեմատ՝ Սուլթանը
իր արշաւանքին ժամանակ տուրք կը պահանջէ. Կար-
նեցի իշխանները կու տան իրենց կարողութեան չա-
փով. երբ կարգը Աստուածատուրի կու գայ՝ բոլոր
կարնեցիներու տուածին ամբողջ գումարին չափ կու
տայ: Սուլթանը տեսնելով այն պարզուկ արտաքինով
մարդուն այդքան մեծ գումար մը տալը՝ կը հարցնէ
թէ ուսկի՞ց ունի այդքան գրամ. Աստուածատուր կը
պատասխանէ. «Ալլահ վերտի» (Աստուած տուաւ):
Ու ասկէ կը մնայ իր եւ իր սերունդին անունը «Ալլահ-
իէրտի»:
³² ՄԷՆՄ. Ալլապար, անդ՝ ծանօթ.:
³³ Բագմ., անդ, էջ 401:
³⁴ Բագմ., էջ 401:

չիկներ այ ունէր»։ Աղջիկներու անունը չի տար Բաճեան. իսկ մանչերն են. «Մանուկ Ամիրա եւ Մատթէոս Ազա Ալլահվերտեանք, որոնք վաճառական գործոց պարապելով ըստ ժամանակին՝ հարստութեամբ շատ հոչակեալ էին կարնոյ մէջ։ 1768 թուականին, Գրիգոր եւ Զաքարիա պատրիարկաց օրը, դարձեալ մեծ հալածումն եղաւ կաթողիկոսաց զէմ՝ եւ ի Կարին ութ իշխանք կաթողիկոսաց մէջ յանկարծ բռնկեցան եւ ի բանտ դրվեցան. շատ միջնորդներ եղան ասոնց ազատութեան համար, բայց ճարը չըզտան։ Եւ այս ութ իշխանք ասոնք էին. Մանուկ Ազա Ալլահվերտեան, Առաքել Ազա, Մաղաքիա Ազա, Գասպար Ազա, Նորատունկ Ազա եւ Աբրահամ Ազա, եւ երկուք ալ ուրիշ։ Այս դասն բանտարկութիւն՝ ետքը աքսորանքի փոխվեցաւ. ուստի այս ութ իշխանք վանի կողմեր ախորեցան, ուր մէկ տարիէն աւելի ախորեանքի մէջ մնալով՝ մեծ մեծ վնասներու հանդիպեցան, եւ Մանուկ Ամիրան մինչեւ պարտքի տակ ալ ընկեր էր. վասն որոյ աքսորանաց տեղէն դարձեր էր նէ, կա՛մ աւօթուն, կա՛մ պարտատեարց կասկածէն տունին մէջ ժամանակ ինչ գոցվեր մնացեր էր։ Բայց որովհետեւ կրօնքի պաշտպանութեան համար այս փորձութիւնք եւ պայտաւի ձախողութիւնք իր գլխուն եկան, Աստուած ալ անակնկալ յաջողութիւն մը տուեր էր իրեն, որ ոչ միայն անբաւ հարստութեան տէր եղեր էր, որուն նման օսմանեան տէրութեան մէջ քիչ կը գտնվեր, այլ եւ հոչակաւոր անուն ունեցաւ նոյն տէրութեան մէջ... Մանուկ Ամիրան՝ սեղանաւորութեան՝ այս է ստաֆուլեան՝ գործոց կը զբաղի եւ շատ յաջողութեամբ ալ յառաջ կը տանի։ Մէկ կողմանէ Կարնոյ այլազգեաց բարբարոսութենէն զուտ, եւ միւս կողմանէ իւր գործոց համար ի Կ. Պոլիս գտնվիլ իրեն օգտակար դատելով, վերջապէս իւր ընտանիքն ալ իւր Մատթէոս եղբոր ընտանեաց հետ ի Կ. Պոլիս կը փոխադրեն, ուր որ հիմա իւր գերդաստանն կաթողիկ եւ հայ գերդաստանաց մէջ ամէնէն ծաղկեալ եւ հին եւ երեսներն է 36»։

Ալլահվերտեաններու ընտանիքով Կարնէն Պոլիս փոխադրութիւնը տեղի ունեցած է 1800էն քիչ առաջ։ Թէեւ Հ. Գալէմբեարեան

35 Արմենիա՝ 1853—1858ին։
36 Բազմ., էջ 401։

րեան անորոշ կերպով «1800ի առջի տարիները Պոլիս փոխադրուած» են կ'ըսէ 37, սակայն Բաճեան կը ճշդէ, ըսելով թէ Նազարէթ Ալլահվերտեան 1784ին ծնած է եւ «ի Պոլիս գացած ատեններն ինքն գրեթէ տասն տարեկան կար 38»։ Ուրեմն՝ իբր 1793ին տեղի ունեցած է Ալլահվերտեանց Պոլիս փոխադրութիւնը։

Ընտանիքով վերջնականապէս Պոլիս փոխադրուելէ առաջ՝ Մանուկ Ամիրա արդէն կանուխէն Պոլիս տուն տեղ ունեցած է՝ գործի համար շատ անգամ հոն գացած ըլլալով։ Հին ժամանակադրութիւն մը կը հաստատէ զայս, գրելով թէ Մանուկ Ալլահվերտեան 1786ին Պոլիս էր 39։

Նկատենք այժմ, զատ զատ հատուածներու մէջ, Աստուածատուրի զաւակներու կեանքը։

Ա. Մանուկ Ամիրա Ալլահվերտեան։ — Աստուածատուրի անդրանիկը՝ Մանուկ Ամիրա Ալլահվերտեան ծնած կը համարուի 1756ին 40։ Այս թուականի ճշգրտեան համար հին վկայութիւն մը չունինք։ Ինչպէս վերը ակնարկեցինք արդէն՝ Մանուկի հօր ծնունդին (1670) եւ Մանուկի ծնունդին (1756) միջեւ 86 տարուան անջրպետ մը կայ, որ տրամաբանական մեկնութիւն մը գտած է։ Հաւանօրէն Աստուածատուրի ծննդեան թուականը — 1670 — սխալ է։ Այդ թուականը կրնայ պատշաճիլ Աստուածատուրի հօր՝ Սահակի։

Մանուկ Ալլահվերտեանի մանկութիւնը անցած է Հինձք գիւղի մէջ, իսկ երիտասարդութիւնը՝ Կարնոյ մէջ։ 37 տարեկան էր, երբ Պոլիս կը հաստատուի ընտանիքով։

Բաճեան վարդապետ կը գովէ Մանուկի հայրենասիրութիւնը. «Մանուկ Ամիրան թէեւ ի Կարնոյ իւր հայրենիքէն տեղափոխութեամբ հեռացաւ, այլ հայրենեաց սէրն միշտ իւր սիրտ իր հայրենեաց հետ կապեր էր. ուստի անպակաս էր իւր բարերարութիւնը՝ իր հայրենեաց եւ հայրենակցաց վրայ։ Իւր ջանքը միշտ իր հայրենակիցքը յառաջ քաշել եւ իր հայրենիքը պայծառացնելն էր. ուստի Կարնոյ մէջ մեր կաթողիկոսներէն շատ

37 Անդ., էջ 148։
38 Բազմ., էջ 402։
39 Տե՛ս Հ. Գրիգ. Գալէմբեարեան, անդ., էջ 174—175։
40 Մէքմ. Ալլապար, անդ.։

տերը յառաջ քաշեր եւ երեսիլի բրեր էր՝ իւր բարերարութեամբ 41»։

Գալէմբեարեան 42 Մանուկ եւ Մատթէոս Ալլահվերտեաններու մասին կը գրէ որ «մեծ դեր ունեցած են ազգային շատ խնդիրներու մէջ, օր. Էջմիածնի Դաւիթ Կաթողիկոսին գլխաւոր հակառակորդներէն եղած են երկուքն ալ, ինչպէս կը յիշէ նոյն Դաւիթ՝ Կ. Պոլսոյ Յովհ. Պատրիարքին 1803ին գրած նամակին մէջ, զանոնք «հերձուածող» անուանելով»։

Էջմիածնի Ղուկաս Կաթողիկոսի մահէն (1799 Դեկտ. 27) վերջ կուրենք տեղի ունեցած էին յաջորդի ընտրութեան շուրջ, բայց մեծամասնութեան ձայնով ընտրուած էր օրինաւոր Կաթողիկոս՝ Դանիէլ Սուրմաւեցիին, որ նոյն միջոցին Պատրիարք էր Պոլսոյ աթոռին։ Սակայն դեռ Դանիէլ Էջմիածին չմեկնած՝ Դաւիթ Ղորղանեան պարսիկ զինուորներու բռնի ուժով, սպառնալիքներով եւ ամէն տեսակ ապօրինի միջոցներով ինքզինքը Կաթողիկոս օձել տուած էր Էջմիածնի մէջ 1801 Ապրիլ 28ին 43։

Ահա այս Դաւիթ Կաթողիկոսն է որ Պոլսոյ Յովհաննէս Զամաչրեան Պատրիարքին ուղղած նամակի մը մէջ կը գրէ 1803 Յունիսին. «...Արդ՝ որպէս իմանամք, խառնակիչն եւ վրդովիչն նոցա, եւ պատճառն վերելման այնք անարդար ձայնի զմէնջ, ո՛չ այլ ոք է, եթէ ոչ՝ փշանալի թօփալ Յակոբն, որ ահա յայտնի է եւ յարգելոյդ, թէ որպէս ինքն եւ Դանիէլն պատճառ եղեն այնքան ծանր վնասուց եւ տուգանաց Կարնեցոց... եւ նա ինքն թօփալ Յակոբն յայդր ունելով համախոհ ինքեան գլխաւորութեան Մանուկ եւ Մատթէոս երկուսեան եղբարսն հերձուածողս, դոցին թեւօփն եւ միջնորդութեամբն առնէ գոր ինչ առնէ, եւ գործէ զչարիս եւ գանձութեամբն։ Ուստի՝ խնդրի ի սիրասուն եղբայրութենէդ, զի հետեւող լեալ՝ զիարդ եւ կարելի է պատուէր տացես յայդր՝ յիշեալ Մանուկ եւ Մատթէոս հերձուածողացն, եւ թօփալ Յակոբին եւս սատեսցես այտի զի հետի կացցես ի խարդախութեանց՝ որ վերաբերի առ մեզ եւ ջանասցես

41 Բազմ., էջ 402։
42 Անդ. էջ 148—149։
43 Տե՛ս այս խնդիրներու մասին՝ Աղէքսանդր Երեցեանց, Ներսէս Եպիսկոպոս Դանիէլ Կաթողիկոսի ժամանակ, Թիֆլիս 1877, էջ 6—11։ — Աւետիս Պէրպէրեան, Պատմութիւն, էջ 8—23։

զայն վայրարանութիւն զոր արարեալ են զմէնջ Կարնեցիք՝ եւ զբեալ իսկ են յայդր՝ խափանել... զի մի յարուսցեն զմեզ ի վրէժխնդրութիւն 44»։

Թէ Ալլահվերտեաններու դերը Ի՞նչ եղած է եւ Ի՞նչ կապակցութեամբ Դաւիթ ապօրինի Կաթողիկոսը զայրացած է անոնց զէմ՝ անձանօթ է մեզ։ Բաճեան չունի ակնարկութիւն այս մասին։ Հաւանական է որ Ալլահվերտեանք, իբրեւ ազդեցիկ անձեր, Դանիէլ օրինաւոր Կաթողիկոսին թեւաբարութիւն ըրած ըլլան եւ ատով իսկ ատելութիւնը զբզրած Դաւիթի։

Այն ստոյգ է որ Ալլահվերտեանք, յատկապէս անոնց գլուխը՝ իր հարստութեամբն ու զիրքովը հռչակաւոր ու մեծագոյնիկ դարձած Մանուկ Ամիրա Ալլահվերտեան՝ նշաւակ եղած է հալածանքի եւ աքսորի նա՛եւ Պոլսոյ մէջ։ Բաճեան կը գրէ. «Աղէկ չեմ գիտեր, բայց անակ լսեր եմ, որ Մանուկ Ամիրան ի Կ. Պոլիս մէկ ախորանք մ'ալ քա եր է. բայց թէ Ի՞նչ պատճառի համար, աղէկ տեղեակ չեմ 45»։

Մանուկի աքսորանքի մասին ունինք կաթողիկէ ժամանակակից Օրագրութիւնը Քէօլեանի։ Այդ աքսորքը 1816ին տեղի ունեցած է՝ իրիկուն մը յանկարծակի ձերբակալուելէ վերջ։ Ահա Քէօլեանի սեղմ տողերը. «1816 Մայիս 17. յերեկոյի պահու ի ժամ 11 (թրքական ժամ) Քեանեա պէյն կոչել ետ զՄանուկն եւ զԳլճեան Անտոնն ի դուռն, եւ արգել ի Միւզիւր աղան 46», այսինքն՝ բանտարկեց։ Գլճեանները ծանօթ են իբրեւ կաթողիկէ հին անուանի եւ ազդեցիկ Գերգաստան, որոնց հետ յետոյ խնամութիւն կ'ունենան Ալլահվերտեանք։

Ատկէ 14 օր ետքը կը գրէ Քէօլեան. «1816 Մայիս 31. ախորեաց արքայն զՄանուկն Աստուածատուրեան զԿարնեցիին եւ զԱնտոնն Գլճեան եւ ընդ սոցա գնացին երկու քահանայք եւ երկու սպասաւորք. Մանուկն ընդ Սահակ Խալքալսեան ի Ռատոս (Հոռոս) Գլճին ընդ պարոն Յովսէփ ի Խարթը քալէյէպէնս 47»։

Ի՞նչ եղած է շարժառիթը Մանուկ Ալլահվերտեանի այս աքսորանքին։ Քէօլեան

44 Դիւան Հայոց Պատմութեան, է., էջ 370—371։
45 Բազմ., էջ 402։
46 Անտոն Քէօլեան, Օրագրութիւն. Չեռադիր վիճեն. Միւլիթ. Մատենադարանի։
47 Օրագրութիւն, անդ., 1816 Մայիս 31։

կը լսէ այդ կէտի մասին: Աչքի առջեւ ունենալով միեւնոյն ժամանակաշրջանի մէջ ուրիշ Հայ Կաթողիկէ ազգեցիկ անձերու ենթարկուած աքտորանքներն ալ⁴⁸ կու գանք այն եղրակացութեան թէ կրօնական եղած է շարժառիթը: Այս մասին թերեւս ուրիշ ստիճակ կարենանք սպառիչ բացատրութիւն մը տալ, երբ Տիւզեաններով զբաղինք:

Տիկին Նեկտար Տիւզեան (ծնեալ Ալլահ-վերտեան), 93 տարեկան, Պարիսէն կը գրէ մեզի. «Կը յիշեմ, Հօրմէս լսած եմ թէ օր մը Եհնի-Խան, ուր ունէին մի քանի սենեակ, Մանուկ տղոցը սենեակը բանալով Նազարէթ եւ Արբաճաճին ըսած է. «Տղայ՛ք, ես կ'երթամ, Դոնէն կանչեցին. քիչ ժամանակէն կը վերադառնամ»: Ծառան եւ զաւրով՝ «էֆէնտիյի ալը գոտուլար» (վար դրին, պահեցին), ըսած է: Ամբաստաներ են քէ Խալամին դէմ խօսեր է: Սո՛ւտ: Մի քանի օր վերջը աքտորեր են: Խեղճ Մանուկ միջնակցէն Իզմիր հասեր է եւ հոն կաթուած ունեցեր է: Քանի մը ամիս խեղճ եւ հիւանդ Իզմիր մնացեր է եւ յետոյ ետ դարձուցեր են Պոլիս, ուր հասեր է ողորմելի վիճակի մէջ: Քիչ ետքը վախճաներ է»:

Մանուկ Ալլահ-վերտեան ունեցած ըլլալու է հօր պաշտպաններ ալ, մանաւանդ թուրք նախարարներու եւ փաշաներու մէջ: Իր աքտորքը երկար չէ տեւած. նոյն տարւոյ Նոյեմբերին արդէն կ'ելլէ ազատութեան հրովարտակը: Քէօլէան նախ 1816 Հոկտ. 19ին կը գրէ. «Պալատիստեան Սահակ վարդապետն եկն ի Հոռոզնէ ընդ ծով յերեսաց Մանուկ աղային⁴⁹»: Իսկ 1816 Նոյ. 14ին ալ կ'իմացնէ. «Ել իլթաֆն (ներում) Մանուկ աղային Կարնեցոյ Աստուածատուրեանին, որոյ վասն աւետարեքի բնթացան հետգիտէ⁵⁰»: 1816 Դեկտ. 11ին Մանուկ Ալլահ-վերտեանի քնոյրդին՝ Գէորգ՝ Հոռոզնէն Պոլիս կու գայ, Մանուկ Ալլահ-վերտեանի մօտալուս գալուստն աւետելով. «1816 Դեկտեմբ. 11. Եկն ի Հոռոզնէ Եկէն Գէորգն աւետարութեամբ յերեսաց Մանուկ քնուոյ իւրոյ⁵¹»: Եւ վերջապէս Դեկտ. 12ին կը գրէ Քէօլէան. «1816 Դեկտ. 12. Եկն Մանուկ աղան ի սիւրկիւնէ. ողջունատուք Եկին

խուռն առ նա ի տուն նորա ամիրայի եւ ամենայն սառափ յայլեայլ ազգաց⁵²»:

Այս տարիներուն Մահաբի Մանուկ Ալլահ-վերտեանի տան մտերիմ այցելու անձերէն մէկն էր հայրենակից սրբակրօն քահանայ մը — Յովհաննէս Վ. Սէլվեան⁵³:

1819ին Տիւզեանց պատահած զարհուրանքին առթիւ գրեթէ հայ կաթողիկէ մը չէ մնացած որ որեւէ կերպով փաստ կամ նեղութիւն կրած չըլլայ: Ալլահ-վերտեանը ուղղակի չեն ենթարկուած հալածանքի կամ նիւթական մեծ փրօսի: Սակայն իբրեւ կարեւոր ու շեշտուած անգամ Հայ Կաթողիկէ Համայնքին՝ իրենք ալ կրած են: Հոս ալ մանրամասնութիւն պէտք չէ սպասել սակայն, քանի որ աւանդուած չէ դժբախտարար: Բայց կան դրաւոր ակնարկներ, որոնք ընդհնմարել կու տան տեղի ունեցած մեծ դէպքերու մասին:

Յովսէփ Չամչեան († 1833) Տիւզեանց փեսան էր եւ ձերբակալուած միւսներուն հետ: Ասոր աղջիկը՝ կինն էր Մատթէոս Աղա Ալլահ-վերտեանի: Մատթէոսի կինը իր ականակապ զարդեղէնները հօրը՝ Յովսէփ Չամչեանի տունը պահած էր: Յովսէփի տունը խուզարկուելով՝ բոլոր գտնուած արժէքաւոր բաները կը գրաւուին եւ աճուրդի կը հանուին: Գրաւուած եւ անուրդի հանուած էին նաեւ Մատթէոսի կնոջ զարդեղէնները: Մանուկ Ալլահ-վերտեան, կը ջանայ եղբորը կնոջ թանկագին զարդեղէնները ազատել, բայց անկարելի կ'ըլլայ: Յետոյ կը ստիպուի այդ զարդեղէնները անուրդի մէջ գնել:

Այս դէպքը յիշուած է Հ. Գրիգորիս Գալճմքեարեանի ձեռագրերուն մէջ՝ հետեւեալ կապակցութեամբ. Տիւզեանց ձերբակալութենէն եւ անոնց հետ կապ ունեցող անձերու բանտարկութենէն վերջ՝ տներու խուզարկութեանց առթիւ կաթողիկէ Ազնաւորեանց տան մէջ երեք մեծ արկղ կը գրաւուի, որոնք սեպհականութիւնն էին Հ. Դավիթ Վ. ձերմակեանի (Վենետ. Միտիթ.): Արկղները նախ Հայոց Պատրիարքարանը կը փոխադրուին, յետոյ արքունիք: Հ. Դավիթ չկարենալով ետ ստանալ Պատրիարքարանէն՝ «Մանուկ Աղա Ալլահ-վերտի միջնոր-

⁴⁸ Օրագրութիւն, 1816 Դեկտ. 12:
⁴⁹ Հ. Յակոբ Մ. Վ. Բօսնան, Բարձր Հայք, Ա. էջ 423:
⁵⁰ Օրագրութիւն, 1816 Դեկտ. 12:
⁵¹ Հ. Յակոբ Մ. Վ. Բօսնան, Բարձր Հայք, Ա. էջ 423:

դուրիւնը կը խնդրէ, որ կը մերժէ՝ ըսելով. ես չկրցայ եղբօրս կնոջ ականակապ զարդերն ազատել, գոյս իր հօրն Չամչեան Յովսէփ Աղայի տունը պահած էր, եւ ստիպուեցայ անուրդէն գնել...»:

Մանուկ Ալլահ-վերտեան Հայ Կաթողիկէ Համայնքի կազմակերպութեան մէջ աչքաուու դեր կատարած կ'երեւայ: Թէեւ 1830էն ստալ Հայ Կաթողիկէութիւնը պաշտօնապէս ճանչցուած չէր իբրեւ ուրոյն Համայնք, սակայն ունէր իր ներքին որոշ կազմակերպութիւնն ու վարչութիւնը: Այդ կազմակերպական աշխատանքները մասնաւոր թափ եւ ուղղութիւն ստացած են Ալլահ-վերտեանց Պոլիս փոխադրուելէ վերջ: Մանուկ Ալլահ-վերտեան, որ արդէն Կարնոյ մէջ հալածանք եւ աքտորք կրած էր՝ Պոլիս անցնելէ յետոյ իր ամբողջ կորովը ի սպաս դրած է Հայ Կաթողիկէներու իրաւանց եւ ընչեց պաշտպանութեան համար: Իր անձնական բարձր դերքը եւ հարստութիւնը իրեն ընծայած ըլլալով ճոխութիւն մը ոչ միայն պոլսահայ սեղանաւորներու, այլ եւ առհասարակ Պոլսոյ սեղանաւորաց դասուն մէջ՝ իր այդ բարձր դերքն ու ազդեցութիւնը յօգուտ Հայ Կաթողիկէ Համայնքին գործածած է: Այս է պատճառը որ Մանուկ Ալլահ-վերտեան անձնապէս աչքի փուշ եղած էր կրօնքի եւ ազգի թշնամիներուն եւ Պոլսոյ մէջ ալ ենթարկուած հալածանքի եւ աքտորքի, ինչպէս տեսանք:

Ալլահ-վերտեաններու այս արժանիքը դնահատելով՝ Ասկերեան անոնց կը ձօնէ հետեւեալ բովանդակալից տողերը. «... այսպիսի (հայ) մեծատուններէն ալ ոմանք եղան՝ թէպէտ եւ շատ քիչ, որոնց Աստուածաւեր եւ ազգասէր յիշատակը օրհնութեամբ եւ գովութեամբ պիտի յիշուին, յախտեանս ժամանակաց, ինչպէս Հոռովմէական Հայոցմէ Տունն Ալլահ-վերտեանց եւ Տունն Թնկըո Սիմոն աղայի եւ այլոց⁵⁴»:

1809ին գրուած Ձեռագիր տետրակի մը մէջ⁵⁵ Մանուկ Ալլահ-վերտեանի մասին կը կարդանք. «Իշխանաւորն Մանուկ Հուտավերտի, որ արդէն ի հայրենիս իւր ի Կարին յետ կրելոյ հալածանս յանձն եւ ի յինչս իւր ի պատնասու ուղղափառ կրօնին՝ համարակեաց ի նմա գատուածային պաշտօնն. եւ

⁵⁴ Յ. Ասկերեան, Հասունեան քաղաքականութիւն, էջ 16—17:
⁵⁵ Դիւան Անտոնեանց, այժմ մեր քով:

այժմ է մի ի կարի պայծառ եւ ի գօրաւոր սեղանաւորաց Կոստանդնուպոլսոյ...»:

Մըրըրեան Անտոն Գերապայծառի մահէն վերջ (1824) յաջորդ մ'ընտրելու համար Հայ Կաթողիկէները Մանուկ Ալլահ-վերտեանի տունը կը հաւաքուին եւ Ազգային ժողովի մէջ կ'ընտրեն Կարնեցի Անտոն Վ. Նուրիճան⁵⁶:

Մանուկ Ալլահ-վերտեանի տունը Բերաէր:

Մանուկ Ալլահ-վերտեանի ընտանեկան կեանքի մասին եղած ակնարկութիւնները շատ ուշտ են եւ անբաւական՝ պայծառ գաղափար մը կազմելու համար: Ամուսնացած էր Կարին՝ Երանուհիի հետ եւ ունեցած զաւակներէն կը յիշուին Նազարէթ եւ Արախալ: Անձանօթ է Տիկ. Երանուհիի ընտանեկան ծագումը, ծնունդն ու մահը: Բաճեան լոկ սա ականարկութիւնն ըրած է, խօսելով Մանուկի որդւոց՝ Նազարէթի եւ Արբաճաճի բարեգործութեանց վրայ. «... մանաւանդ որ այս մեծագործութեան յարդարիչ ունէին իրենց ազնուաշուք մայր՝ Երանուհի տիկինն, որ իր կեանքը չէր խնայեր իւր հայրենեաց համար⁵⁷»: Ասկէ կը տեսնուի թէ Մանուկ Ալլահ-վերտի մահէն վերջ իր Տիկինը դեռ տարիներ ապրեր է:

Հ. Ն. ՊՕՂՈՍԵԱՆ

⁵⁶ Ասկերեան, անդ, էջ 17—18:
⁵⁷ Բազմ., անդ, էջ 402: